347 Հիսուսն է միայն ամեն բան,

1. Հիսուսն է միայն ամեն բան,
Նա է Ալֆան և Օմեղան,
Առաջինը և վերջինը իմ կյանքի մեջ:
Փոթորիկները երբ որ գան
Կյանքս անելու ցիրուցան,
Իր զորավոր բազուկներով կգրկի ինձ:
Ուստի երգում եմ բարձրաձայն՝
Իր անունին վստահելով,
Իմ բոլոր մեղքերը ներեց
Ու ցավերից ինձ ազատեց:
Հիսուսը միայն ինձ համար ամեն բան է:

2. Շատերն այսպես անցնում, գնում,
Առանց հավատքի են մնում,
Հավիտենական պատժին են արժանանում:
Հիսուս սրա համար եկավ,
Խաչափայտի վրա մեռավ,
Որ ամեն ոք, ով հավատա, նա փրկվի:
Ուստի Նրան դու վստահի՛ր,
Մեղքերդ Իրեն խոստովանի՛ր,
Հույսդ միայն Հիսուսն արա՛,
Նեղ ճամփայով մտի՛ր, գնա՛:
Հիսուսը միայն ինձ համար ամեն բան է:
Հիսուս միայն, Հիսուս միայն, Հիսուս միայն: